«Կարանտին սահմանելու դեպքում նյութատեխնիկական ապահովման և ֆինանսավորման դեպքերը, կարգն ու պայմանները սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2020 թվականի № _____ -Ն

ԿԱՐԱՆՏԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 22-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել կարանտին սահմանելու դեպքում նյութատեխնիկական ապահովման և ֆինանսավորման դեպքերը, կարգն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

Կառավարության 2020 թվականի

_____ ____ -ի N ____-Ն որոշման

ԿԱՐԱՆՏԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են կարանտին սահմանելու դեպքում նյութատեխնիկական ապահովման և ֆինանսավորման դեպքերը, կարգն ու պայմանները:
2. Արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում պետական կառավարման համակարգի, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ գործունեության կազմակերպման, բնակչության պաշտպանության, սանիտարահամաճարակային անվտանգության և դրա շրջանակներում օրենքով սահմանված համապատասխան միջոցառումների իրականացման նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ու համայնքների բյուջեների միջոցների հաշվին:
3. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և կազմակերպությունները ստեղծում են կարանտին սահմանելու դեպքում նյութատեխնիկական ապահովման պաշարներ:
4. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և կազմակերպությունները կարանտին սահմանելու դեպքում նյութատեխնիկական ապահովման միջոցների վերաբերյալ համապատասխան հայտով դիմում են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ինչպես նաև աղետների ռիսկի, հետևանքների նվազեցման և վերացման ապահովման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման համակարգի մարմնին (այսուհետ՝ Լիազոր մարմին)՝ պետական պահուստում կուտակելու նպատակով:
5. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և կազմակերպությունները կարանտին սահմանելու դեպքում նյութատեխնիկական ապահովման միջոցները չբավարարելու դեպքում Լիազոր մարմնի միջոցով համապատասխան հայտերը ներկայացնում են Կառավարությանը՝ հավելյալ ֆինանսական միջոցներ ստանալու նպատակով:
6. Լիազոր մարմինը՝ սույն հավելվածի 5-րդ կետում նշված հայտը ստանալուց հետո մեկ, իսկ լրացուցիչ տեղեկությունների հավաքագրման անհրաժեշտության դեպքում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում է Կառավարությանը: